# ՏԵՂԵԿԱՆՔ

**«Հայաստանի Հանրապետության կառավարության և Չեխիայի Հանրապետության կառավարության միջև հանցավորության դեմ պայքարի ոլորտում համագործակցության վերաբերյալ» համաձայնագրի կնքման նպատակահարմարության մասին**

Հաշվի առնելով երկու երկրների միջև առկա բարեկամական փոխհարաբերությունները և ընդունելով ընդհանուր շահերի ոլորտում երկկողմ համագործակցության ամրապնդման և զարգացման անհրաժեշտությունը՝

Համաձայնագրի ստորագրումը հնարավորություն կընձեռի.

հանցագործությունների կանխարգելման, խափանման, բացահայտման և հանցագործների հայտնաբերման ուղղությամբ իրականացնել համագործակցություն հետևյալ ոլորտներում՝

- ահաբեկչական գործունեության հետ կապված հանցագործություններ,
- զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, ինչպես նաեւ միջուկային և ռադիոակտիվ նյութերի հետ կապված հանցագործություններ,
- անչափահասների մասնակցությամբ պոռնոգրաֆիկ նյութերի պատրաստման եւ տարածման հետ կապված հանցագործություններ,
- մարդկանց հատկապես կանանց և երեխաների թրաֆիքինգի, շահագործման եւ մարդուն ազատությունից զրկելու հետ կապված հանցագործություններ,
- մարդկային օրգանների, հյուսվածքների, բջիջների անօրինական առեւտրի հետ կապված հանցագործություններ,
- անօրինական միգրացիա,
- մշակութային եւ պատմական արժեքների նկատմամբ հանցավոր ոտնձգություններ,
- արժեթղթերի, փաստաթղթերի եւ վճարման էլեկտրոնային միջոցների կեղծում, անօրինական պատրաստում եւ տարածում,
- ավտոտրանսպորտային միջոցների հափշտակում եւ դրա հետ կապված անօրինական գործողություններ,
- հանցավոր գործունեության արդյունքում ստացված եկամուտների օրինականացում,
- թմրամիջոցների, հոգեներգործուն նյութերի եւ բաղադրիչների ապօրինի շրջանառություն,
- **բարձր տեխնոլոգիաների ոլորտում կատարվող հանցագործություններ,**
- մտավոր սեփականության ոլորտում կատարվող հանցագործություններ,
- շրջակա միջավայրի դեմ ուղղված հանցագործություններ:

Ինչպես նաև հնարավորություն կընձեռի համագործակցել քրեական հետապնդումից կամ պատիժը կրելուց թաքնվող, ինչպես նաև անհայտ կորած անձանց հետախուզման գործում, իրականացնել հանցագործությունների նոր տեսակների դեմ պայքարի վերաբերյալ տեղեկատվության փոխանակում, աշխատանքային փորձի փոխանակում, որակավորման բարձրացման դասընթացների, խորհրդակցությունների, սեմինարների կազմակերպում, կազմակերպել հանցագործությունների բացահայտման ուղղությամբ գիտական համատեղ հետազոտություններ:

Ելնելով վերոգրյալից, ՀՀ ոստիկանությունը նպատակահարմար է գտնում Համաձայնագրի կնքումը:

**ՀՀ ոստիկանության շտաբի պետ,**
**ոստիկանության գեներալ-մայոր** **Վարդան Եղիազարյան**